ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6
«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-7/11» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՄԱՆ(ԳՀ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

10-ը մարտի 2023թ.
Ժամը 10^{45}

Մասնակցում էին՝
Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳՎ ԹԱ վարչության պետ Հ. Մելիքյան /ԳԱՊ/,
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության ԹԱ վարչության ապահովման 2-րդ բաժնի գլխավոր մասնագետ Գ. Ուստյան,
ՀՀ ՋՈՒ ԹՎ իրային ծառայության պահեստների, տեխնիկական միջոցների և բաղնիքալվացարարային ապահովման բաժնի պետ, գնդապետ Գ. Թովմասյան,
ՀՀ ՋՈՒ ԹՎ իրային ծառայության պահեստների, տեխնիկական միջոցների և բաղնիքալվացարարային ապահովման բաժնի ավագ սպա, մայոր Մ. Երամյան,
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության գնումների կազմակերպման վարչության գնումների կազմակերպման 2-րդ բաժնի գլխավոր մասնագետ, Ն. Թադևոսյան:

«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-7/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ն.Թադևոսյան)

1. «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-7/11» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «ԼԵՈ Ա» ՍՊԸ-ին պայմանագիր կնքելու իրավունքից զրկելու վերաբերյալ.
2. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-7/11» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին ընթացակարգի 3-րդ, 4-րդ և 7-րդ չափաբաժինների մասով բավարարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների որոշման մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. *«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-7/11» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «ԼԵՈ Ա» ՍՊԸ-ին պայմանագիր կնքելու իրավունքից զրկելու վերաբերյալ.*

(Ն.Թադևոսյան)

1.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-7/11» ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի արդյունքում «ԼԵՈ Ա» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի՝ 10.02.2023թ. որոշմամբ ճանաչվել էր ընտրված մասնակից: 01.03.2023թ. «ԼԵՈ Ա» ՍՊԸ-ին armeps համակարգի ոչ ավտոմատ ծանուցմամբ ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ և պայմանագրի նախագիծը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո՝ սույն օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի և (կամ) որակավորման ապահովումը, իսկ կնքվելիք պայմանագրով կանխավճար նախատեսված լինելու դեպքում նաև կանխավճարի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից: Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով, որ «ԼԵՈ Ա» ՍՊԸ-ն պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո օրենքով սահմանված ժամկետում չի ստորագրել պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացրել պայմանագրի և որակավորման ապահովումները՝ գնահատող հանձնաժողովի որոշմամբ վերջինս զրկվում է պայմանագիրը կնքելու իրավունքից:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. *Ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-7/11» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին ընթացակարգի 3-րդ, 4-րդ և 7-րդ չափաբաժինների մասով բավարարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների որոշման մասին.*

(Ն.Թադևոսյան)

2.1 «ԼԵՈ Ա» ՍՊԸ-ին պայմանագիրը կնքելու իրավունքից զրկելու արդյունքում 10.03.2023թ.՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-7/11» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընտրված մասնակից ճանաչել՝

1. «ԻՓԻԷՍ» ՍՊԸ-ին 4-րդ չափաբաժնի մասով,
2. «Փրիթի Ուեյ» ՍՊԸ-ին 7-րդ չափաբաժնի մասով,

Իսկ 3-րդ չափաբաժնի մասով գնահատող հանձնաժողովը որոշեց սույն ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած այդպիսին չճանաչված մասնակիցների բացակայության պատճառով:

2.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել նիստի արդյունքները և անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել: Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-7/11» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել այն: Սույն ընթացակարգի 3-րդ, 4-րդ և 7-րդ չափաբաժինների մասով սահմանվում է տասնօրյա անգործության ժամկետ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող	Հ. Մելիքյան
Գնահատող	Գ. Ուստյան
Գնահատող	Գ. Թովմասյան
Գնահատող	Մ. Երամյան
Գնումները համակարգող՝	Ն. Թադևոսյան